ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» հոկտեմբերի 2011թ. **N - Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի թիվ 300 որոշմամբ և հաշվի առնելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Գույքահարկի գծով արտոնություն սահմանել սույն որոշման 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված անձանց՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունների մասով, նվազեցնելով գույքահարկի գծով արտոնություն տրամադրելու օրվա դրությամբ՝ մինչև 2011 թվականի դեկտեմբերի 1-ը առկա հարկային պարտավորությունները, իսկ սույն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց՝ 2011 թվականի գույքահարկի գծով պարտավորությունները:

2. Սույն որոշումը, գույքահարկի գծով արտոնություն տրամադրելու նպատակով, տարածվում է՝

1) Հայրենական մեծ պատերազմի վետերանների,

2) Արցախյան և Աֆղանստանի պատերազմներում զոհվածների ընտանիքների և առաջին խմբի զինհաշմանդամների.

3) Արցախյան և Աֆղանստանի պատերազմների 2-րդ խմբի զինհաշմանդամներին՝ Երևան քաղաքում հաշվառված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակությամբ շինությունների մասով:

2.1 Որոշման 2-րդ կետում նշված անձանց գույքահարկի արտոնություններ տրամադրել սեփականության իրավունքով նրանց պատկանող բնակելի նշանակության

շինությունների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ այն բնակելի նշանակության շինությունների սեփականության նկատմամբ, որտեղ հաշվառված են այդ անձինք։ Գույքահարկով հարկվող բնակելի նշանակության մեկից ավելի շինությունների առկայության դեպքում սույն որոշումը տարածվում է այդ շինություններից մեկի նկատմամբ՝ ըստ գույքահարկի արտոնություն ստացած անձի կամ նրա ընտանիքի ցանկության:

3. Երևանի քաղաքապետին՝

սույն որոշման պահանջների կատարումն ապահովելու նպատակով ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ սույն որոշման 2-րդ կետում նշված հարկատուների գրանցման և գույքի գտնվելու հասցեների վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը՝ մինչև դեկտեմբերի 1-ը օրենսդրությամբ սահմանված կարգով ճշտելու, ձեռք բերելու և անհրաժեշտ ձևակերպումներ կատարելու համար:

4.Այն անձինք, որոնք կհրաժարվեն գույքահարկի արտոնության տրամադրումից, այդ մասին գրավոր հայտնում են Երևանի քաղաքապետին, որի հիման վրա կատարվում է վերահաշվարկ:

5.Սույն որոշմամբ սահմանված արտոնությունը տարածվում է որոշման 2-րդ կետում նշված այն անձանց վրա, ովքեր գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունները ձեռք են բերել կամ դրանցում հաշվառվել են մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 66-րդ տարեդարձի, ինչպես նաև Շուշիի ազատագրման և խաղաղության օրվա առթիվ, առաջարկում եմ Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, Արցախյան և Աֆղանստանի պատերազմներում զոհվածների ընտանիքներին և առաջին խմբի զինհաշմանդամներին տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունների մասով ՝ նվազեցնելով գույքահարկի գծով արտոնություն տրամադրելու օրվա դրությամբ մինչև 2011 թվականի դեկտեմբերի 1-ը առկա հարկային պարտավորությունները, իսկ Արցախյան և Աֆղանստանի պատերազմների երկրորդ խմբի զինհաշմանդամներին՝ 2011 թվականի գույքահարկի գծով պարտավորությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գույքահարկի գծով արտոնություն սահմանել Հայրենական Մեծ Պատերազմի վետերաններին, Արցախյան և Աֆղանստանի պատերազմներում զոհվածների ընտանիքներին և առաջին խմբի զինհաշմանդամներին, ինչպես նաև Արցախյան և Աֆղանստանի պատերազմների 2-րդ խմբի զինհաշմանդամներին՝ Երևան քաղաքում հաշվառված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունների մասով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք Հ. 1

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույքահարկի գծով արտոնություն տրամադրելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 2

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին,Արցախի ազատամարտում զոհվածների ընտանիքներին.Արցախի ազատամարտի և Աֆղանստանի պատերազմի մասնակիցներին պատկանող (1-ին և 2-րդ կարգի հաշմանդամներ) Երևան քաղաքում գտնվող գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունների մասով 2011թ. հաշվարկված գույքահարկի գծով հարկային պարտավորությունների վերաբերյալ

Աջափնյակ	Կարգ	Ընդ. քանակը	Չիջ. քանակը	Ընդամենը գումար
	Վետերան	93	40	709 661,0
	Արցախյան	139	31	89 832,0
	1-ին խումբ	10	2	2 591,0
	2-րդ խումբ	124	31	53 612,0
	Ընդամենը	366	104	855 696,0

Ավան	Կարգ	Ընդ. քանակը	Չիջ. քանակը	Ընդամենը գումար
	Վետերան	58	24	63 299,0
	Արցախյան	64	19	13 331,0
	1-ին խումբ	3	0	-
	2-րդ խումբ	68	14	10 924,0
	Ընդամենը	193	57	87 554,0

Արաբկիր	Կարգ	Ընդ. քանակը	Չիջ. քանակը	Ընդամենը գումար
	Վետերան	187	101	422 108,0
	Արցախյան	102	51	195 600,0
	1-ին խումբ	10	0	-
	2-րդ խումբ	61	26	106 746,0
	Ընդամենը	360	178	724 454,0

Դավթաշեն	Կարգ	Ընդ. քանակը	Չիջ. քանակը	Ընդամենը գումար
	Վետերան	26	7	19 370,0
	Արցախյան	35	13	42 150,0
	1-ին խումբ	14	3	24 394,0
	2-րդ խումբ	43	23	163 574,0
	Ընդամենը	118	46	249 488,0

Էրեբունի	Կարգ	Ընդ. քանակը	Չիջ. քանակը	Ընդամենը գումար
	Վետերան	104	30	87 920,0
	Արցախյան	145	34	106 609,0
	1-ին խումբ	15	1	2 221,0
	2-րդ խումբ	115	22	64 153,0
	Ընդամենը	379	87	260 903,0

Կենտրոն	Կարգ	Ընդ. քանակը	Չիջ. քանակը	Ընդամենը գումար
	Վետերան	198	111	1 306 424,0
	Արցախյան	189	55	432 827,0
	1-ին խումբ	41	14	404 052,0
	2-րդ խումբ	36	12	63 292,0
	Աֆղ 1-ին խումբ	1	1	4 414,0
	Աֆղ 2-րդ խումբ	1	1	3 375,0
	Ընդամենը	466	194	2 214 384,0

Մալաթիա	Կարգ	Ընդ. քանակը	Զիջ. քնանկը	Ընդամենը գումար
	Վետերան	90	21	61 722,0
	Արցախյան	172	59	233 266,0
	1-ին խումբ	19	7	8 774,0
	2-րդ խումբ	128	44	141 965,0
	Ընդամենը	409	131	445 727,0

Նոր Նորք	Կարգ	Ընդ. քանակը	Զիջ. քանակը	Ընդամենը գումար
	Վետերան	158	35	22 283,0
	Արցախյան	117	12	25 781,0
	1-ին խումբ	18	6	1 517,0
	2-րդ խումբ	159	25	17 246,0
	Ընդամենը	452	78	66 827,0

Նորք -Մարաշ	Կարգ	Ընդ. քանակը	Զիջ. քանակը	Ընդամենը գումար
	Վետերան	24	12	104 044,0
	Արցախյան	10	3	4 897,0
	1-ին խումբ	0	0	-
	2-րդ խումբ	9	4	11 216,0
	Ընդամենը	43	19	120 157,0

Նուբարաշեն	Կարգ	Ընդ. քանակը	Զիջ. քանակը	Ընդամենը գումար
	Վետերան	4	0	-
	Արցախյան	22	4	3 479,0
	1-ին խումբ	1	0	-
	2-րդ խումբ	10	2	5 158,0
	Ընդամենը	37	6	8 637,0

Շենգավիթ	Կարգ	Ընդ. քանակը	Զիջ. քանակը	Ընդամենը գումար
	Վետերան	124	30	67 705,0
	Արցախյան	146	24	44 975,0
	1-ին խումբ	22	3	4 466,0
	2-րդ խումբ	0	0	-
	Ընդամենը	292	57	117 146,0

Քանաքեռ	Կարգ	Ընդ. քանակը	Զիջ. քանակը	Ընդամենը գումար
	Վետերան	62	29	141 582,0
	Արցախյան	71	17	29 658,0
	1-ին խումբ	5	2	5 128,0
	2-րդ խումբ	42	11	43 441,0
	Ընդամենը	180	59	219 809,0

Երևան	Կարգ	Ընդ. քանակը	Զիջ. քանակը	Ընդամենը գումար
	Վետերան	1128	440	3 006 118,0
	Արցախյան	1212	322	1 222 405,0
	1-ին խումբ	158	38	453 143,0
	2-րդ խումբ	795	214	681 327,0
	Աֆղ 1-ին խումբ	1	1	4 414,0
	Աֆղ 2-րդ խումբ	1	1	3 375,0
	Ընդամենը	3295	1016	5 370 782,0

Եկամուտների հաշվառման և գանձման վարչություն